

ԵՐԵՎԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկանը 6 ռուբլ. Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրուած են միմիայն խմբագրատան մէջ. Մեր հասցէն. Тифлис, Редакция «Мелк». Կամ Tiflis, Rédaction «Mschak». Տէլէֆոն № 253.

Յմարագրութիւնը բաց է առաւօտան 10—2 ժամ (բացի կիրակի եւ առաւօրեայ).

Յայտարարութիւն ընդունուած է ամեն լիցիւզով. Յայտարարութիւնների համար վճարուած են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ. Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱՅՈՒԹԻՒՆ

Իժան փոխառութիւնների համար. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մեր բարեբերից. Նամակ Ախալ-ցախէ. Նամակ Բագրատի. Նամակ Աստրախ-անի. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Տեղան Զուհանեան. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր. ՀԵՒԱԳԻՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ԻժԱՆ ՓՈԽԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Նաւ լաւ կը լինի, որ պետութիւնը օգ-նէ զիւրացիներին, արհեստաւորներին եւ աւաւսարակ մանր արդիւնագործներին եւ ձեռք բերելու փոխառութիւններ էժան տոկոսով, սակայն հարց է ծագում, թէ արտաքին եւ ինչ աղբիւրից կառավարու-թիւնը վերցնէ այն գրամազուլը, որից նա պէտք է բաժանէ փոխառութիւնները ցանկացողներին:

Այլ հարցն է մի քանի տնտեսագէտներ պատասխանում են դրական կերպով՝ ցոյց տալով, որ կառավարութեան ձեռքում ներկայումս մի խոշոր ազատ գումար է կանգնած, որից կարելի է օգտուել փոքր եւ էժան կրեդիտ կազմակերպելու համար:

Այլ գումարը — խնայողութիւններից գո-յացած այն փողերի «պահուստներն» են, որոնք կաթիլ-կաթիլ ժողովրդով պետու-թեան զանազան մասերում եւ յանձնված լինելով խնայողական գրամազուլերին, իրեւ պահուստագրամներ, վերջ ի վերջոյ կազմել են մի ահազին գումար, այն է 762 միլիոն ռուբլի: Ահա մանր խնայողութիւններից յայտնած այդ գումարը մեր իշխած տնտե-սագէտները առաջարկում են գործադրել նոյնպէս մանր փոխառութիւններ տալու գրամ կարգութիւն ունեցողներին:

Սակայն այստեղ իսկոյն առաջ է դալիս մի հիմնական հարց, — արդե՞օք նպատակա-յարմար է գործադրել խնայողութիւնների գումարը ուրիշ նպատակների համար, ար-դե՞օք այդ հանգամանքը վնասակար չի լինի խնայողական գրամազուլերի գործու-նեցութեան զարգացման համար: Պէտք է չլռուստալ այն հանգամանքը, որ պա-հուստ անողները կարող են ամեն մի օր յետ վերցնել իրանց գումարները, ուստի անկարելի է մի չափազանց շարժական եւ փոխելի գրամազուլի վրա հիմնել լուրջ վնասակար գործողութիւններ: Եթէ պահուստները՝ որ եւ է հանգամանքից պակասած՝ յանկարծ յետ վերցնեն իրանց տուած գումարները, այն ժամանակ կը սպառվի այն աղբիւրը, որից պէտք է մանր փոխառութիւններ տրվելին կամ տրվել են ցանկացողներին: Բացի այդ՝ պահուստ ա-նողները, բաւականանալով պետական բան-կի տուած չափաւոր տոկոսով, մի քանի վրա վաւաճ են, որ նրանց պահուստները ոչ մի փոխադի չեն ենթարկվի եւ կը մնան միշտ իրեւ պատրաստի փողեր, որոնց կա-րելի է վերցնել, երբ կարիքը պահանջէ: Նրանց պահուստները, վերածված լինելով պետական արժեթղթերի, գտնվում են անկախում կատարելագոյն ապահով վի-ճակի մէջ եւ վստահութիւն են վայելում հասարակութեան աչքում, իրեւ անկո-րուստ գումարներ:

Անկասկած, պահուստագրամները պէտք է առանձին խնամքով պահվեն, պէտք է համարվեն իրեւ անձեռնմխելի գումարներ կողմնակի նպատակների համար եւ մշտա-պէս պատրաստ լինեն իրանց տեղերին վե-րադարձվելու: Բայց աչքի առաջ ու-նենալով այն, որ անկարելի է ենթադրել թէ միանգամից ամբողջ պետութեան մէջ պահուստագրամները յետ կը վերց-նվեն եւ որ եւրաքանչիւր տարի խնայո-ղական գրամազուլերի գումարները աճում են զգալի կերպով, կարելի կը լինէր ամ-բողջ Փոնդի մի օր եւ է մասը, օրինակ մի

տասն երոր դալանը, գործադրել էժան-ն մանր կրեդիտի կազմակերպութեան հա-մար, պայման դնելով, որ պետութիւնը իր մնացած միջոցներով ապահովէ խնայո-ղական գրամազուլների անկորուստ եւ անփոփոխ պահպանվելը եւ միշտ պատրաստ լինի վերադարձնել նրանց՝ ըստ առաջին պահանջման:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ե Ր Բ Ա Ր Գ Ե Ր Ի Ց

(Նամակ Երեւանից)

Վիճակագրական հաշիւներից երեւում է, որ Երեւանում այս ամսվայ մէջ կատարվել են մինչեւ 39 սպանութիւն, մեծ մասամբ հայերի մէջ:

Դա մի մեծ ցաւ է Երեւանի համար, որ պարբերաբար գնալով կարծէք սկսում է աւելի մեծ չափեր ստանալ, որի առաջն առեւելու հա-մար հարկաւոր է քրքրել յանցանքների իսկա-կան բոյնը:

Ամեն մի քաղաք, ամեն մի հասարակութիւն ունի իր ընկած եւ անբարոյական երիտասարդ տարրը, որ սերունդ է այն տգէտ եւ կողպու-թեան մէջ մեծացած ամբողի, որ ոչ մի ըն-տանեկան եւ բարոյական կրթութիւն չէ տա-լիս նոր սերունդին: Որքան շատ է, ստուար ալլաւելում այդ սերնդի թիւը մի հասարա-կութեան մէջ, նոյն ժողովուրդը նոյնքան եւ յաճախ ենթակայ է նրանց արտադրած զանա-զան յանցանքներին: Երեւանը բաւական հա-րուստ է դրանցով: Յանդուգն, բիրտ երիտա-սարդութեան թիւը աւելի բազմապատիկ է, քան այն երիտասարդութեան, որ իր ուսմամբ եւ զարգացմամբ բարոյական զարգացման բար-ձրութեան վրա է կանգնած: Չէ կարելի ուրա-նալ եւ այն հանգամանքը, որ հարուստ զանապա-րհի մէջ կան տներ, ուր պակասել է ընտանե-կան դաստիարակութիւնը եւ ուր արտադրում է փչացած սերունդ: Մտքը մեր քաղաքում սուսկի պէս բուսնող «պիլանները» ու տարկ-տիրները եւ դուք կը տեսնէք մի անագին հո-սանք, շարժում նրանց շուրջը պտտւող այդ միջնորդի օղջ չնշող երիտասարդների, որոնք աղտոտ եւ քաղ միջնորդի հարազատ ապա-կանութիւնը չնշելով, ալլաւելում են, անբա-րոյականանում եւ կատարելագործվում զանա-զան տեսակ յանցագործութիւնների մէջ:

Բարոյական եւ մտաւոր չանքաւորւնեցող հասա-րակութեան մէջ երիտասարդ սերնդի անձամա-նութիւնը ամբողջովին պտտում է հարեմի եւ ալ-քօթի շուրջը. զարգացածները ընած են, խորա-սուզված իրանց անձնական կոպէկների հաշիւներ մէջ, իսկ անբարոյականութիւնը հեղաշարժա-նալիքով առաջ տանելու համար պտտաւորա-ապականութեան խոռոչները, գարշելի անկիւն-ները կազմում են ընդհանուր ձգտման եւ հո-գեկան բաւականութեան առարկան. նրանք ա-զատ կերպով առաջ են տանում իրանց գործը-նչապնչելու, այլապէս կը եւ անպէտք դարձ-նելու մեր սերնդի մեծ թիւը: Չը կայ ներկա-յումս մեր կանանցում կրկնվող մի յանցանք, մի զէպը, որ արդիւնք չը լինի այդ չկուլալում սըն-վող սերնդի, եւ տեղի ունեցած սպա-նութիւնների մէջ այդ որջերում կատարված-ները միշտ գերազանցում են:

Գողութիւնը, սպանութիւնները, զանազան սրկկայութիւնները ալլաւելում սերնդի ի-դէալներն են. փչացած երիտասարդները ու-նեն իրանց խմբերը, պարագլուխները: Ամեն մի չնչին պտտում, մի քանի կոպէկի հաշիւ, առուտուրի եւ անձնական թշնամանքի գործ, եւ ահա զէպը պտտաւոր է, զոհը արեւելուայ վայր ընկած: Մի սպանութիւնը հիւք է կազ-մում մի քանի սպանութիւնների, որոնց պար-բերաբար հակառակ կողմերը վրէժի համար են կատարում:

Թուրքերի մասին խօսք չէ կարելի ասել:

Նրանք բանտերը լցնում են զանազան եղանա-գործներով. դա նրանց տգիտութեան հետե-ւանքն է: Սակայն հայ ժողովուրդը, որ մօտ է զարգացման աստիճանին, որ վերածնված լու-սաւոր ազգերի շարքն է ուղում մտնել, կար-ծում ենք, որ կարող է միջոցներ ձեռք առնել կռելու այդ ցաւի դէմ, որը առաջ է դալիս ընտանեկան կրթութեան եւ դաստիարակու-թեան բացակայութիւնից, հասարակական դա-տաւարների անհոգութիւնից զէպի ալլաւելու-վող բարեբեր:

ՆԱՄԱԿ ԱՆԱՆՑԱՅԻՑ

Յուլիսի 10-ին

Լրագիրը մի միջնավայր է, որի մէջ անդա-դանում է հասարակական կեանքը իր բոլոր երեւոյթներով եւ գաւառի կեանքը մասնաւո-րապէս՝ գաւառական թղթակցութիւնների մի-ջոցով: Թղթակցութիւնները արձանագրում են ջիւղի շատ նշանակալի ունեցող զէպերը եւ մեծ մասամբ դրանով էլ բաւականանում են, այն ինչ աւելի ցանկալի էր, եթէ նրանք աշխատէին մատնացոյց անել երեւոյթի գողու-թեան սկզբնապատճառը, մեղակցներին նրա հիւքերը: Նկատելի է, որ երբ նամակի նիւթը հասարակական կեանքից է, մատնացոյց են ա-նում փաստը, խուսափելով վերլուծել նրան, որ մի գուցէ մերկ ճշմարտութիւնը անսխառութե-ւորութիւնների առիթ չը լինի: Թղթակցութեան այս եղանակը, բացի այն, որ գաւառական կեանքի ճշգրիտ պատկերը չէ ներկայացնում, դեռ մի մեծ անյարմարութիւն էլ ունի: Կարգաւոր մի այլապէս թղթակցութիւն, ընթերցողը ենթա-դրութիւնների մէջ է ընկնում եւ թիւր կար-ծիք կազմում գաւառական ժողովրդի մասին:

Ինչպէս հաստատութիւն ասածներին՝ կար-գացէ մի անգամ էլ «Մշակ» № 144-ի մէջ զետեղած նամակը Ախալցխայից: Նամակը գըր-ված է երէցիկների ընտրութեան համար գու-մարած ժողովի առթիւ: Ժողովը, նախկին տարիների օրինակին հետեւելով, վճռել է ընտ-րել 30 պատգամաւորներ ձեռնհաս մարդկան-ցից, որոնք կընտրեն մի արժանաւոր երէցիկի: Ընտրութիւնների ժամանակ տեղի է ունե-նում մի «անսպասելի երեւոյթ»: Ընտրութեան սկզբին ընտրութեան են զնում քաղաքա-գլուխ պ. Գր. Մովսիսեանին եւ, ի մեծ զար-մանք ամենքին, քաղաքային աւագը ձայների սակաւութեան պատճառով չէ ընտրվում պատ-գամաւոր. ձայների օրինական թիւը (աւելի մեծ զարմանք) չէ ստացվում երկրորդ ու եր-րորդ անգամ կրկնվող ընտրութիւնից յե-տոյ:

Իսկապէս չափազանց զարմանալի է, որ մի ամբողջ քաղաքի ընտրած քաղաքագլուխը յան-կարծ նոյն քաղաքացիներից մինչեւ անգամ պատգամաւոր չէ ընտրվում երեք անգամ ա-ռաջարկվելուց յետոյ:

Այս զէպը բնորոշ է եւ ուշադրութեան ար-ժանի: Սոյնանման զէպերը ակամայ կարծես են տալիս, որ մեր հասարակութեան մէջ ընտրու-թիւնները լինում են կամ խնամիական միջոց-ներով, կամ ճնշողութեամբ, կամ ընտրախնդ-րելու են հասարակութիւնից չը ծանաչված մարդիկ, այլապէս չէր կարող պատահել, որ ընտրված քաղաքագլուխը մերժվէր, ինչպէս էլ համահասարակ անպատշաճ է ընտրուում Ա-խալցխայի հասարակութիւնը:

Առաջինը ապացոյց կարող է լինել, որ ժո-ղովրդին պակասում է անաչառութիւնը, բայց արա զէմ բողբում է նամակի բովանդակու-թիւնը, թէ եւ պ. Մովսիսեան ասում է. «Ժողով-րդի մեծամասնութիւնը այդ բանը բոլորովին չը հասկացաւ եւ անմիտ կերպով միայն նա-խադասի ամեն մի առաջարկութեան համա-ձայնութիւն տուեց», բայց մի քանի տող յե-տոյ կարդում ենք. «Մի քաղաքային աւագ ծը-խականների կողմից պատգամաւոր չէ ընտր-վում, իսկ, ընդհակառակը, նրանից, թէ դի-ր»

բով եւ թէ գիտութեամբ ստոր մարդիկ ըն-տրվում են... Այս վերջին խօսքերը ապացոյց են, որ ժողովուրդը անպատշաճ է, եթէ միայն նա ազատ է ճնշողութիւնից: Եւ բոլորովին անմիտ չէ, ինչպէս պ. Մովսիսեան է կարծում, որովհե-տեւ նա մերժում է «քաղաքի աւագին» «դի-րով» ու «գիտութեամբ» բարձր անձնաւորու-թեանը:

Թէ ժողովուրդը չընճանաչած մարդուն է ընտ-րում, դա ապացոյց է նրա անտարբերութեան զէպի հասարակական գործերը, բայց արա զէմ խօսում է այն իրողութիւնը, որ Ախալ-ցխայի անջան փողք քաղաք է, որ զառամեալ ծերից սկսած մինչեւ նորահաս պատանին դի-տեն ամբողջ քաղաքի հայ բնակիչներին եւ ոչ թէ դիտեն միայն զէպերը, այլ եւ ամեն մի ընտանիքի ներքին կեանքը. սրանում եւս հա-մողվելից կարծ ժամանակ մնալով Ախալցխայում: Ուրեմն այս երկու ենթադրութիւնները ան-հիմն են, մնում է երկրորդը, որ ընտրութիւն-ների ժամանակ ճնշողութիւն է գործ դըր-վում ժողովրդի վրա: Այս ենթադրութեան զէմ եւ, ցանկութեան հակառակ, առարկու-թիւն չէմ գտնում. միակ ստուգելի միջոց է քաղաքի ներքին կեանքին մօտ ծանօթութիւնը, որ զգալիաբար միշտ իրագործելի չէ:

Լաւ կը լինէր, եթէ նամակագիրը, փոխանակ զարմանք յայտնելու եւ երեւոյթը անսպասելի անուշով կնքելու, բացատրէր նրա սկզբնա-պատճառը, որպէս զի մենք, պատահաւոր գա-ւառը ընկած եւ նրա ներքին կեանքին անձա-նօթ լինողներս, աւելի ծիւղ ըմբռնէինք նամակ-ների մէջ անբարոյաբանող գաւառական կեանքը:

Երեւոյթները հիմնաւորապէս վերլուծելու կա-րելիութիւն է ստանում այն պատճառով, որ թղթակցները իրանք գաւառներում ապրող, գաւառի կեանքին մօտ ծանօթ մարդիկ են:

Օր. Մինէ

ՆԱՄԱԿ ԲԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Յուլիսի 10-ին

Երեւանի բնակչութիւնը ամուսնացող աղջիկների վրա դեռ եւս հայեցիս մէջ բոլոր-րովին չէ վերացել. աղջկան ծախում են՝ որ-պէս մի անշունչ առարկայի, մի փայտի կտո-րի: Իզուր են անցնում թախանձանքը, լացը... Անգութ ծնողները չեն լսում իրանց զոհի ձայ-նը, որպէս մի փայտի կտոր՝ ում գիրկն ասեւ նետում են, լինի դա մարդ-հրէշ, վերնաշար-ախառնով վարակված, կամ իր կեանքի զարու-նը անցկացրած այրի եւ այլն: Չոհ գործ է դնում ամեն մի ջանք ազատվելու այդ ան-տանելի դրութիւնից, լսել տալու իր ձայնը, արդարացի բողբում, սակայն, ով է լսողը. քարանում է ծնողների սիրտը, համարանում ականջները, բողբումը մնում են՝ ձայն բար-բառոյ յանապատի: Իրանց հետեւանքներն են մի շարք ամուսնալուծական խնդիրներ, որոնք մեր հայերիս անբուժելի վէրքերն են կազմում:

Ամուսնական խնդիրներում ամենամեծ պա-տաւանատուութիւնը ընկնում է հողեւորա-կանութեան վրա. քանանքն է, որ ի մի է զուգաւորում երկու ամուսնացողներին, նախօ-րօք առնելով երկուսի փոխադարձ համաձայ-նութիւնը: Սակայն, ով զարմանք. բանիդ երե-ւում է, որ Բագուում, այդ լուսաւոր կենտրո-նում, քանանքն ոչ թէ զէմ է բռնի ամուս-նութեան, այլ կուսակից բռնակալ ծնողների եւ մինչեւ անգամ խախտուող, Իրանցիկ ա-պացոյց ահա մի փաստ, որը բնորոշում է մեր հողեւորականութեան խտադրութիւնը, սակաւ բացառութեամբ:

Մրանից մի քանի տարի առաջ Բագուում բնակութիւն է հաստատում մի այրի կին իր միակ աղջկայ հետ. այրին լինելով թեթեւ վարքի տէր, զրաւում է նուրիցի մի ընտա-նիքի տէր պարոնի սիրտը ու հետը մի քանի տարի ապօրինի կենակցելով, վերջը պատճառ է դառնում մի բազմանդամ ընտանիքի քայ-ջայման Պարոնը ապահարգան է պահանջում իր կնոյից, թողնելով վրան մի քանի զաւակներ եւ

ուշադրութիւն չը դարձնելով հասարակական գաղափարներն, շարունակում է իր գեղի կեանքը եւ մի գեղեցիկ օր փորձ է փորձում բռնաբարելու իր սիրած այրիի կոյս աղջկան (մօր համաձայնութեամբ), որի հետեւանքը լի նուաճ է այն, որ պարտնք լաւ ծեծ է ուտում եւ աղջիկն էլ հեռանում է մօրից։

Օրիորդը այժմ ապրում է իր ամուսնացած քրոջ մօտ եւ նշանակելով ուղում է ամուսնա-նալ։ Անգուց մայրը, մոռանալով ծնողական սուրբ պարտականութիւնները, խնդրամատոյց է եղել գործակալի պաշտօնակատար քահանայի աւաջ, չը պատկեր օրիորդին, առարկելով թէ իր դուստրը նախ իր անից պիտի պատկեր եւ երկրորդ, նա վաղուց նշանված է այն հրէշի վրա, որը կամեցել է խախտել բռնի կերպով նրա կուտութիւնը։ Դեռ բաւական չէ, որ ինքը պատճառ է դառել մի ընտանիքի դժբաղդու-թեան, ցանկանում է զոհել իր աղջկան այն մարդուն, որի երեսը տեսնել անգամ չէ ու-գում աղջիկը, ուր մնաց նրա կին դառնալ։

Եւ ինչ էք կարծում, ընթերցող, գործակալի պաշտօնակատար տեղերը յարգում է մօր խնդիրը եւ մինչեւ օրս էլ պատկեր հրամանը չէ տալիս, առաջարկելով փեսացուին հեռանալ աղջկանից եւ թողնել անպաշտպան արարածին մօր կամքին։ Հետագայք իմանալ, թէ տեղերը ո՞ր օրէնքի հիման վրա չէ տալիս պատկեր հրա-մանը, չէ որ հայոց եկեղեցու համար սահման-ված Պօլոսիկի մատանիքը է անում ամուս-նացողներին փոխադարձ համաձայնութեան վրա, մի կողմ թողնելով ծնողների միջամտութիւնը, մասնաւոր աղաքի գէպը, որտեղ մայրը ստիպում է աղջկան լինել այն մարդու կինը, որը շուտով երկրորդ հայր կը դառնայ իրանց ընտանիքում։ Եթէ Բագրու պէս քաղաքում աղաքի գէպը եւ տեղի ունենում, ապա ինչքն չեն կատարվում մեր գեղեցիկները։

Ա. Շահվերդեանց

ՆԱՄԱԿ ԱՍՏՐՈՆԱՆԻՑ

Յունիսի 29-ին

Երկաթուղու հարցը շարունակվում է դեռ օրվայ խնդիր լինել։ Ազգաբնակչութեան մէջ նկատվում է մի անսովոր ոգեւորութիւն եւ միջոցառութիւն։ Խնդիր լուծուող այնքան ան-սպասելի էր, որ շատերը չեն հաւատում իրանց լսածներին։ Սակայն իրողութիւնն իրողութիւն է եւ Աստուծոյ մօտ ապագայում ունենալու է իր երկաթուղին։ Այսօր եւս ստացված է նոր հեռագիր, որով յայտնվում է, թէ յուլիս ամ-սին նշանակվելու է կառավարիչ՝ գործերը սկը-սելու համար, իսկ աշանք գալու է ճանա-պարհների հաղորդակցութեան միջոցառող Գծի շինութիւնը արագ կերպով պիտի գնայ։

Ձեռք կարող չարձանագրել քաղաքային վար-չութեան եռանդուն գործունէութիւնը։ Ձայ-նաւորներից շատ շատերի սրտերը բռնված են գործելու մի արտասովոր տենչով։ Մենք ան-ցեայ անգամ չը հաղորդեցինք այդպիսի ձայնա-ւորների անունները, սակայն սրանց արածը այն աստիճան մեծ է, որ այլ եւս մեղք ենք համարում սրանց լռութեամբ անցնել։ Այդպիսի ձայնաւորների մէջ առաջնակարգ տեղը պատ-կանում է պ. Քրիստափօր Սարգսեանին։ Յար-գելի պարտնք այդ խնդրում այնքան է աշխա-տել, որքան եւ ոչ միւր միւսներից։ Նա այժմ եւս Պետերբուրգում է եւ շարունակում է այնտեղ գործել ու հետադիմներով անդադար տեղեկութիւններ հաղորդել գործի ընթացքի մասին։ Մանաւանդ պարտնք մեծ աշխատանք է գործ դրել գրաւոր ապացոյցներ հաւաքելու գործում։ Այդ աշխատանքները կազմում են գրական մի պատկառելի վաստակ։ Այս օրերս, այդ աշխատութիւնները անքի առաջ ունենա-լով, մի քանի անձինք յայտարարութիւն են տալիս դուրս գալու եւ խնդրում են առանձին չը-նորհակալութիւն յայտնել պարտնքի Դուսնը, երէկվայ նիստում գրադիւլով այդ խնդրով, չը բաւականացաւ լով շնորհակալութիւն յայտնե-լով, այլ կամեցաւ մի այլ կերպ արտայայտել իր գոհունակութիւնը։ Առաջարկողներ եղան, որ պէտք է մի ոսկեայ մեդալ մատուցանել քաղաքի կողմից, եղան կարծիք յայտնողներ, որ այդ քիչ է, լաւ է, որ նրա անունով մի դպրոց բանալ կամ նոյն իսկ պատուաւոր քաղա-քացու անուն պարգևել։ Վերջական վճիռ կա-յացնելուց առաջ, վճռեց այդ գործը յանձնել յատուկ յանձնաժողովի, որպէս զի նա ուսում-նասիրէ եւ որոշէ, թէ այդ առաջարկութիւն-ները որին անելի պէտք է նախապատուութիւն տալ։

Բացի սրանից վճռված է շնորհակալութիւն յայտնել նաեւ պ. Դանիէլ Սարգսեանին եւ

նրանց, որոնք նոյնպէս առանձին եռանդով պաշտպանել են քաղաքի շահերը։

Գուցէ լինեն ասողներ, որ իւրաքանչիւր ձայնաւորի բարոյական պարտնք է պաշտպանել քաղաքի շահերը։ Այդպէս է Բայց ներկայ խնդրում այդ պաշտպանութեան չափը անց-նում էր սովորական սահմաններից եւ դժուա-րութիւններն այնքան բարդ էին, որոնց յաղ-թելու համար մեծ ջանք էր պահանջվում։ Բա-ւական է ասել, որ հակառակ կուսակցութիւնը թէեւ փորձաթիւ էր, սակայն բաղկացած էր «պեղծիքներից» եւ «ուժեղներից», որոնց դէմ կոհե յայտարարելը շատ էլ անվտանգ եւ դի-րին գործ չէր։

Հաղորդելով այս տեղեկութիւնները, մենք միտք չունենք չեղտել այդ հայ ձայնաւորների ծառայութիւնները թիւ ազգային ինքնապա-րութիւնից զրոյթով։ Կէնք սրա համար էլ մենք մեր առաջին նամակում այդ ձայնաւորների ա-նուններն էլ չը տուինք։ Ներկայումս եթէ ար-ձանագրում ենք այդ իրողութիւնը, այդ իրեւ-մի նմուշ է մեր քաղաքային վարչութեան բար-բերից։

Եայտնելով շնորհակալութիւն հայ ձայնաւոր-ներին, դուսն ցոյց տուեց, թէ նրա մէջ ճշը-մարտութիւնը եւ անհաշուութիւնը չէ թաղ-ված, թէ նա հեռու է «ազգայնական» կոչված թիւ ցաւերից։ Եւ դուրսի բռնած այդ դի-րքը, իրեն շնորհա զնահատում, մեզ խոր կերպով յուզեց։ Մենք նկատեցինք, որ բռն-ժողովրդի մէջ երբեք թիւ ազգային խնդր-ներ առաջ չեն եկել, այլ գնահատվել են միւս մարդու արժանաւորութիւնները, ինչ ազդիք էլ լինեն դրանք։ Իսկ եթէ երբեմն-երբեմն տեղի են ունենում այդպիսի դէպքեր, այդ միայն պատահական որոշումներ են, որոնք զգնում են ո-րոշ մարդկանց կողմից, որոշ նպատակներով։ Եւ եթէ լաւ նկատեք, այդպիսի որոշ ցաւով բռնված են լինում միայն նրանք, որոնք ոչ մի որոշ կապ չեն ունենում ազգաբնակչութեան շահերի հետ։ Ուրախալ է, որ մեր դուսն ազատ է այդ ցաւից։

Յ. Սոյուխան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՆՏ

Յունիսի 22-ին, Նորին Կայսերական Մեծու-թիւն Այրի Կայսրուհի Մարիա Ֆեոդորովնայի ա-նուանակոչութեան տօնի օրը, Միսի տաճարում պատարագ մատուցվեց եւ գոհացողական մաղ-թանք կատարվեց ժամանացութեան ներկայ էին գեներալները, ազնուականութեան, քաղա-քի եւ զանազան հիմնարկութիւնների ներկա-յացողներից։ Մաղթանքներ կատարվեցին նոյն-պէս հայոց եւ միւս դաւանութիւնների եկե-ղեցիներում։ Քաղաքը առաւօտից զարդա-ված էր դրօշակներով, իսկ երեկոյեան լուսա-վառված էր։

Թիֆլիսի քաղաքային ու պարական մօտ օրե-րումս աւարտեց Թիֆլիսի ձիաքայլը էլէքտրա-կան տրամվայի վերածելու՝ ուղղած եւ լրաց-րած ծրագրի ձեւերով։ Եւ սկզբունքով հա-ւանութիւն տալով նրան՝ որոշեց ընդունված կարգով ներկայացնել ներքին գործերի մի-նիստին հաստատութեանը։

«Вѣд. Ох. Гр.» լրագրում Օդէսայի քաղա-քային պաշտօնակատարի կողմից յայտարար-վում է. «Ի նկատի ունենալով, որ Օդէսայում ժամանակաւոր հիւանդանոց չորս կապածելի դէպքեր եղան, ժամանակաւոր դէմ կուտու հա-մար Բարձրագոյն հաստատված յանձնաժողովը որոշեց Օդէսան յայտարարել ժամանակաւոր կող-մից վտանգաւոր քաղաք եւ բանալ «սանիտա-րական գործադիր յանձնաժողովի» գործողու-թիւնները, որոնք մասնացոյց են արված 1897 թվի յունիսի 29-ին Բարձրագոյն հաստատված կանոնների մէջ»։

«Տնօրէն Փուրցել» լրագրի խօսքով, վրաց-դրամատիքական ընկերութեան վարչութիւնը մտադիր է վերոյիշեալ ընկերութեան կից բա-նալ թատրոնական դասարաններ։ Բացի դրա-րից որոշված է 5000 ռ. տալ վրաց ազնուակա-նութեան թատրոնի վերաշինութեան համար։

Ճանապարհների փչանալու պատճառով, մի քանի օր Ռուսաստանի պօստը չէր ստացվում։ Վերջապէս յուլիսի 23-ին պօստը ստացվեց։

Տեղական լրագրիները հաղորդում են, որ անտառային դէպարտամենտում միտք է ծա-գել անտառային բարձրագոյն ուսումնարան

հիմնելու։ Կովկասում, որտեղ նախապատրաստ-վէին անտառագետներ մեր երկրի համար։

Թիֆլիսի նահանգական վարչութիւնը ջննե-լով քաղաքային դուրսի որոշումը Շամախու երկրաշարժից վնասվածներին Թիֆլիսում կա-պարով հողաբաժիններ տալու մասին, մայիսի 16-ի նիստում վճռել էր առ ժամանակ յետա-ձգել դուրսի այդ որոշման կատարումը՝ մին-չեւ որ դուսն աւելի որոշ կերպով ձեւակեր-պէ իր վճիռը եւ տայ կարեւոր բացատրու-թիւնները։ Նահանգական ատենի այս վճիռ պատճառով քաղաքային դուսն, յունիսի 10-ի նիստում, նորից ջննելով շամախեցիներին կա-պարով հողաբաժիններ տալու հարցը, որոշեց 80—100 քառակուսի սաժէն հող տալ կապա-լով ամեն մի խնդրատու շամախեցու, իսկ ա-պագայ խնդրատուների վերաբերմամբ նոյն չա-մանեցիներին՝ յանձնեց ու պարզապէս մանրա-մասն զեկուցումն ներկայացնել դուրսի կա-պարի պայմանների հետ միասին։ Թիֆլիսի նա-հանգական ատենը այս վճիռն եւս գտաւ անորոշ առաջինի նման եւ վճռեց բոլորովին անկատար թողնել դուրսի որոշումները շա-մախեցիներին կապարով հողաբաժիններ տալու մասին։

Կովկասեան Գիւղատնտեսական ընկերու-թեան խորհուրդը, չարաթ, յունիսի 20-ին, տեղեկութիւն ստացաւ կովկասեան կառավար-չապետի գիւնատնից, որ ընկերութեան միջ-նորդութիւնը՝ կովկասեան յօրեկանական ցու-ցանագէտից մնացած 24,160 ռուբլի 73 կօ-պէկ դժփոքի տը ի հաշիւ գանձարանի ընդու-նելու մասին՝ երկրագործութեան միջոցառու-թեան կողմից յարգված է եւ այդ մա-սին գրագրութիւն է սկսված ֆինանսների մի-նիստութեան հետ։

Հաղորդակցութեան ճանապարհների միջոցա-րոշութեան մէջ կազմակերպվում է մի առանձին յանձնաժողով՝ երկաթուղիական աղէտների ա-ռաջն առնելու միջոցներ գտնելու համար։

ՎԱՄԻԿԱՎԻԿԱՅԻՑԻՑ մեզ գրում են. «Ժողո-րդի անվերջ բողոքներին վերջ տալու համար, մեր թեմի առաջնորդ Արիստակէս արքեպիսկո-պոսի հրամանով այստեղ հասաւ Գլխարկ փո-խանորդ քննիչ երիտասարդ Թովմա վարդապե-տը։ Քննիչ վարդապետի գալը մի առանձին կենդանութիւն տուեց տեղական հայ գաղու-թիւն։ Քննիչ վարդապետը, ամբողջ տառն օր եւսանում ջննութիւն կատարելուց յետոյ, կաղ-մեց հարուստ տեղեկութիւններով լի մի ար-ձանագրութիւն տեղիս Միսաս աւագ քահա-նայ Միսանեանի քահանայագործութեան եւ գործակալական պաշտօնավարութեան ժամա-նակ կատարած գեղծունեւորի մասին։ Հա-աքեց բազմաթիւ գրաւոր վկայութիւններ միաբան քահանաներից, օպտաւորներից եւ բողոքող ծխականներից։ Գանգատողներից աչքի էին ընկնում կանայք եւ ութսունամեայ ծերունի-ները։ Հայր քննիչը բազմաթիւ բողոքներով եւ վկայաթղթերով վերադարձաւ Պետրոլիս, ուր գտնվում է թեմի առաջնորդ Արիստակէս արք-եպիսկոպոսը ամբարնոցում։ Պաշտօնապէս յայտարարված է քահանայ չը ճանաչել Միսա-նեան աւագ քահանային, մինչեւ հոգեւոր բարձր իշխանութեան կարգադրութիւնը, երեք ամիս ժամանակով»։

ՔիճՆՆՎԻՑ մեզ գրում են. «Քաղաքիս հա-յերի խօսակցութեան առարկան այն աղմկայի գործն է, որ յուլիսի 15-ին տեղի ունեցաւ տեղիս հայոց առաջնորդարանում։ Գործը կա-յանում է հետեւեալով։ Օրէնք քաղաքում գո-յութիւն ունեցող մի կտակի համաձայն, իւրա-քանչիւր տարի մի մի չքաւոր օրիորդի, իւրեւ-օժիտ, պիտի տրվի այդ նպատակով կտակված մի խոշոր գումարի տուրքները—1200 ռուբլի։ ՔիճՆՆՎԻՑ իրազմանաւ աւագ քահանան, որ մի եւ նոյն ժամանակ եւ կօնսիստօրիայի ան-դամ է, յաճախ միջոցդ է հանդիսանում այդ գործում այս կամ այն չքաւոր օրիորդի հա-մար, այն պայմանով, որ պտակ անպայ-ման իր ձեռքով կատարվի, որ պտակադրամը ինքը ստանայ։ Ահա համանման մի դէպքի ա-ռիթմով Հնչեզտի հայոց երիտասարդ Յովհաննէս քահանայ Աբրահամեան գանգատ էր ներկա-յացրել թեմիս առաջնորդին եւ մի ընդարձակ բողոքաբանութեան նկարագրել էր Բար-սեղ աւագ քահանայ իրազմանաւ շարժար-ժութիւնները»։ Վերջինս պահանջել էր, որ Աբրահամեան քահանայ հաստատէ իր գրած-ները։ Գործը վերջացաւ նրանով, որ Աբրահա-

մեան քահանայի մեղադրանքները ապացուց-ցին եւ առաջնորդը յանդիմանելով իրազմանա-քահանային՝ խիստ պատուիրեց, որ այսուհետեւ այդպիսի դէպքեր չը կրկնվեն»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԻԳՐԱՆ ԶՈՒՀԱՅԵԱՆ

Թիւրքահայ յայտնի երաժշտագէտ, հանգ-ցեալ Տիգրան Զուհաճեանի գերեզմանի վրա միտք կայ մահաբճան կանգնեցնելու։ Ար-հատարակված է Զուհաճեանի «Օրիմպիա» վերտիւրը, որից գոյացած արդիւնքը պէտք յատկացնելու այդ նպատակին։ Աւստրիական լրագրից այդ առիթով տպագրել է մի յորտու-որ ամբողջապէս բերում ենք այստեղ։

Ողբացեալ մեծանուն երգահանը մէկն էր ունեցող, որոնք իրենց մեռնելէն ետքը դարձե-կապրին տարիներու ընթացքին մէջ, առա-իրենց վառվածն երիտասարդութենէն բան իրազմանելու, եւ որոնք անունները միշտ յիշուին համակրութեամբ ու պատկառու-ու կը մնան անշնչ սիրտերու եւ մտքերու մէջ։ Որովհետեւ անոնք իրենց ամբողջ կեանքը նու-րած են արուեստին, եւ անխնայ կերպով յաճախ ալ անվարձ — աշխատած են հոգե-թովիլու ու մտքեր հայելու՝ ներդաշնակ-թեանց զգայալունց վերացումներով Պոյոյ աւան դաշնակի վրայ կան Զուհաճեանի կա-ները, եւ ամէն երաժշտագէտ չի կրնար զու-ողբացեալ երգահանին նկատմամբ հիացում ու որուն լիովին արժանի է ան, բանի որ առաջ-հեղինակը ու վարպետը եղած է նոր երաժշ-թեան մը եւ նոր ներդաշնակութիւնները։ Զուհաճեանն է, որ առաջին անգամ ստեղծա-արեւելեան օրէնքն, ուր արեւելքի բոլոր եր-րային զգայնութիւնները կը թուանաւ։ առաջ-անգամ ան հաւաքած ու անուրանալի տաղանդ-ը մէջ ընդ շարած է այն հրաշալի ներդաշնակ-թիւնները, որոնք երազել կուտան Վտփո-րանաստեղծական երկերը եւ արեւելեան բո-րանաստեղծութիւնները։

Հնչեալն ու թովիլը բան մը կայ Զուհաճե-անի գործերուն մէջ, որոնք ունկնդիրը կը գիտնային անուշ գիտնվութեամբ մը եւ մե-կուզէ մինչեւ վերջը թաղուիլ այն երաժշ-թեան մէջ, ուր Արեւելքի կապոյտ երկինքը ժպտել եւ ուր կը լսուին կարծեալ գեղեցիկները։ Եւ պարտքը եւ միմեծիւ-երեւել ծովով Զուհաճեան առանց գօնադրութեամբ կամ մի վարպետի մը աշակերտը ըլլալու եւ նոյն ի-շատ քիչ արժանի կարգացած ըլլալով հանդի-րակ իր տաղանդին շնորհիւ գուշակած էր ք-րաները, զորս չէր սովորած. եւ սակայն այս-ողբացեալ երգահանին գտած ներդաշնակ-թեանց առջիւ ամենէն կարող վարպետներն ան-գամ սքանչացած կը մնան։ Զուհաճեան իր բ-լոր համբաւը կը պարտի միմիայն իր տաղ-դին, եւ արդէն միեւնոյն բանը չէ եղած քի-թէ մեր բոլոր հանճարներուն համար։

Զուհաճեանը մօտէն ճանչցողները գիտեն, իր արտադրելու ինչ մեծ արժանութեան տեղ կը Յաճախ չոգենաւ մէջ գծաւորութեան թուր-վրա արագօրէն կը գրէր իր ներշնչումները մտքին մէջ նուազելով գրի առածները, միջո-շատ մը մեծ վարպետներ իրենց զաշնակէ-նու չեն կրնար տող մը իսկ հեղինակել։ Եւ սօր ողբացեալ երգահանը շատ մը անտաղ-անգիրներ ունի իր ազգականներուն ու բո-կարներուն տունները, որոնք կը բոստելու գա-պարտուած են անշուշտ։

Զուհաճեան շատ անուշ ընաւորութիւն ունի, եւ կը վարէր կեանքը կատարեալ-րուեստագէտի մը, առանց կարեւորութիւն տա-լու դրամին եւ քանի մը օրումս մէջ լինեցող-եւ ասոր անոր բաշխելով իր բոլոր շահանքի-որոնք ատենը մը բաւական կարեւոր գումար-կը ներկայացնէին։ Զուհաճեան իր վերջին տարիներուն մէջ անցուցած էր աշակերտներու մեծ մասը։ վարձարաններու մէջ երաժշտութեան դաս տա-լու համար, եւ կը վարէր կեանքը կատարեալ-րուեստագէտի մը, առանց կարեւորութիւն տա-լու դրամին եւ քանի մը օրումս մէջ լինեցող-եւ ասոր անոր բաշխելով իր բոլոր շահանքի-որոնք ատենը մը բաւական կարեւոր գումար-կը ներկայացնէին։ Զուհաճեան իր վերջին տարիներուն մէջ անցուցած էր աշակերտներու մեծ մասը։ վարձարաններու մէջ երաժշտութեան դաս տա-լու համար, եւ կը վարէր կեանքը կատարեալ-րուեստագէտի մը, առանց կարեւորութիւն տա-լու դրամին եւ քանի մը օրումս մէջ լինեցող-եւ ասոր անոր բաշխելով իր բոլոր շահանքի-որոնք ատենը մը բաւական կարեւոր գումար-կը ներկայացնէին։

Դասերու միջոցին ալ արուեստագէտի բն-ւորութիւնը ի յայտ կուգար. երբ աշակերտն

23 յուլիսի
10ն70ն: Այսօր թագաւորը, առանց ուրիշ
օգնութեան, իշաւ անդունդով եւ մտաւ զբա-
սանաւր:

ԻՅԼ: Բուսնական թագաւորին դիմաւորեցին
ողեւորութեամբ:

10ն70ն: Համայնքների ժողով: ՕՅիկն հե-
տեւեալ հարցադրումն արաւ. — ուստաց եւ
աւստրիական կառավարութիւնները յարաբե-
րութիւններ սկսեցին միմեանց հետ բարենորո-
գումները մտցնելու վերաբերմամբ. մտադիր է
արդեօք անգլիական կառավարութիւնը միանա-
լու Ռուսաստանին եւ Աւստրիային: Կրանքորն
պատասխանեց, թէ կառավարութեան ուշա-
դրութիւնը դարձած է բարենորոգումներ մտ-
ցնելու գործը թիւեւացնելու վրա օսմանան
պետութեան եւ քաղաքական նախնիներու: Կա-
ռավարութիւնը օգուտ կը գողէ ամեն մի յար-
մար դէպքից եւ անգլիական կը ցոյց տայ
միւս պետութիւններին այս հարցում:

ՕԴԵՍՍԱ: Այսօր հանրապետութեան կերպով բաց-
վեց համառուական ատամնաբուժական ժողո-
վը: Հաւաքվել են 312 ատամնաբուժներ: Ուղարկ-
ված են հետադիւրս թագաւոր Կայսրին, Թա-
գաւոր Կայսրուհի Մարիա Ֆեօդորովնային եւ
համաժողովի պատուաւոր նախագահ պրինց
Օլիգնորովսկին: Համաժողովի նախագահ ըն-
տրված է պրոֆէսոր Չալերսկիսկին, նրա օգ-
նական — «Зубоврачебный Вестник»-ի խմբ-
ագիր Սինիցին: Այսօր համաժողովի անդամ-
ները նայում են տեղական հիմնարկութիւննե-
րը: Զեկուցումների ընթերցումը տեղի կունե-
նայ վաղը:

ՊԵՏԵՐԲՈՐԳ: Յուլիսի 22-ին Թագաւոր
Կայսրը բարեհաճեց մեկնել Պետերսօփից, կայ-
սերական «Շտանդարտ» զբոսանաւով, դէպի
Ռէվել, ծովային զորահանգէսին ներկայ լինելու
համար: Յուլիսի 22-ին, Թագուհի Կայսրուհի
Մարիա Ֆեօդորովնայի անուանակոչութեան
տօնի, եւ նրան զվարդական էկիպաժի շէֆ
նշանակելու տառնաւորայ տարեդարձի օրը, Թա-
գուհի Կայսրուհու ներքին անեականների պա-
տուհանների տակ, «Կոստէդ» պալատում, այդ
էկիպաժի երաժշտական խումբը սերենադա
կատարեց: Էկիպաժի հրամանատար փոխ-ծովա-
պետ Արապա բաղդ ունեցաւ մատուցանելու
էկիպաժի կողմից մի ծաղկափունջ եւ զվար-
դական էկիպաժի ժէքօնը: Մեծ պալատի
հեկեղեցում ժամի 11-ին կատարվեց հաւ-
դիսաւոր մաղթանք, որին ներկայ էին Թա-
գաւոր Կայսրը, Թագուհի Կայսրուհի Մա-
րիա Ֆեօդորովնայ, յունական թագուհի Օլգա
Կոստանտինովնայ իր որդիների՝ Նիկոլայ Գեօր-
գիւիլիի եւ Խրիստափօր Գեօրգիւիլիի հետ —
ներքին գործերի մինիստրը որոշեց յայտնել
«Московск. Вѣдомостѣ» լրագրին առաջին նա-
խագովորութիւն 197-դ №-ում մի յօդուած
տպագրելու համար միջնակարգ դպրոցների ըն-
թերքի մասին:

ՍԱԽԱԼԻՆ: (Ուղարկված է յուլիսի 5-ին,
ստացված է յուլիսի 23-ին): Միջոցներ են
ձեռք անալու, որպէս զի Եսպանիայի եւ Զի-
նաստանի նաւահանգիստներում աւերածներ
գործող խօշորա չը բերվի Սախալին:

Խմբագիր՝ ԱԼԵԿՍԱՆԴՐ ԲԱՍԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԲԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍՍՀԱՅ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱՆԱՆ:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԵՐԿՈՎՎԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒԿ
(Ժամերը նշանակված են Պետերբուրգի հաշուով,
փակագծում թիֆլիսի հաշուով)

Զրադ գնացք թիֆլիսից—Բագու շաբաթը
մեկ անգամ ուրբաթ օրերը զուրա է զալիս առա-
ւելան 10 ժամ 15 րոպ. (11 ժ. 49 ր.), հասնում է
Հաղու գիշերվա 12 ժամ 11 ր. (1 ժ. 9 րոպէին):

Արադ գնացք Բագուից—Թիֆլիս զուրա է
զալիս ուրբաթ օրերը գիշերվա 12 ժամ 52 րոպէ
(1 ժ. 50 ր.), հասնում է Թիֆլիս գիշերվա 2 ժ. 45 ր.
(3 ժ. 43 ր.):

Արադ գնացք թիֆլիսից—Բագու ամեն օր
զուրա է զալիս առաւելան 6 ժ. 45 ր. (7 ժ. 43 ր.)
հասնում է Բագու կերկրելան 5 ժ. 2 ր. (6 ժ.):

Արադ գնացք Բագուից—Թիֆլիս ամեն օր
զուրա է զալիս երկուշաբթի 10 ժ. 10 ր. (11 ժ. 8 ր.),
հասնում է Թիֆլիս առաւելան 9 ժ. 4 ր. (10 ժ. 2 ր.):

Պատաստար գնացք Բագուից զուրա է զալիս
երկուշաբթի 9 ժ. 22 ր. (10 ժ. 20 ր.), հասնում է Թիֆ-
լիս գիշերվա 3 ժ. 56 ր. (4 ժ. 54 ր.), զուրա է զալիս
Թիֆլիսից երկուշաբթի 5 ժ. 9 ր. (6 ժ. 7 ր.),
հասնում է Բագու առաւելան 5 ժ. 40 ր. (6 ժամ
38 րոպէին):

Մարդատար գնացք Բագուից զուրա է զալիս
գիշերվա 2 ժ. 27 ր. (3 ժ. 25 ր.), հասնում է Թիֆլիս
առաւելան 7 ժ. 39 ր. (8 ժ. 37 ր.), զուրա է զալիս

Թիֆլիսից առաւելան 8 ժ. 29 ր. (9 ժ. 27 ր.),
հասնում է Բագու կերկրելան 8 ժ. 30 ր. (9 ժ.
28 ր.):

Պատաստար գնացք Բագուից զուրա է զալիս
գիշերվա 11 ժ. 5 ր. (12 ժ. 3 ր.), հասնում է
Թիֆլիս գիշերվա 11 ժ. 34 ր. (12 ժ. 32 ր.),
զուրա է զալիս Թիֆլիսից գիշերվա 12 ժ. 36 ր.
(1 ժ. 34 ր.), հասնում է Բագու առաւելան 6 ժ.
16 ր. (7 ժ. 14 ր.):

Մարդատար գնացք Բագուից զուրա է զալիս
առաւելան 7 ժ. 5 ր. (8 ժ. 3 ր.), հասնում է
Թիֆլիս երկուշաբթի 6 ժ. 39 ր. (7 ժ. 37 ր.), զուրա
է զալիս Թիֆլիսից երկուշաբթի 7 ժ. 24 ր. (8 ժ.
22 ր.), հասնում է Բագու գիշերվա 12 ժ. 5 ր.
(1 ժ. 3 ր.):

Պատաստար գնացք զուրա է զալիս Թիֆլիսից
գիշերվա 4 ժ. 57 ր. (5 ժ. 55 ր.), հասնում է Ալէք-
սանդրօպօլ երկուշաբթի 8 ժ. 5 ր. (9 ժ. 3 ր.),
Ղարաքիլիս 11 ժ. 42 ր. (12 ժ. 40 ր.), Թիֆ-
լիս առաւելան 6 ժ. 20 ր. (7 ժ. 18 ր.):

Խաւն գնացք Թիֆլիսից զուրա է զալիս գի-
շերվա 2 ժ. 15 ր. (3 ժ. 13 ր.), հասնում է Ղարա-
քիլիս 9 ժ. 30 ր. (10 ժ. 28 ր.) Ալէքսանդրօ-
պօլ գիշերվա 1 ժ. 25 ր. (2 ժ. 23 ր.):

Խաւն գնացք Ալէքսանդրօպօլից զուրա է
զալիս առաւելան 5 ժ. 25 ր. (6 ժ. 23 ր.), հասնում
է Ղարաքիլիս առաւելան 8 ժ. 35 ր. (9 ժ. 33 ր.)
եւ Թիֆլիս գիշերվա 3 ժ. 37 ր. (4 ժ. 35 րոպէին):

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՐ ՀԻՒՆԴԱՆՈՅ

Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուլիս, Կործնողի արձանի հաղէպ)

ԱՄԵՆՈՐ, բացի կիրակի օրերից:
ԱՌԱՋՈՅ ԵՐԷ

Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. փրաքտու-
թեան, վեներական (սիֆիլիս) եւ միզաեռ. հիւանդ.
Կ. Բ. Գալիլի—12—1 ժ. ականի, քիւ եւ կո-
կորդի:

Զ. Բ. Բարանասեան—11—12 ժ. կանանց եւ
երեխայից հիւանդ.
Գ. Ա. Թախանեան—1—1/2 ժ. ներքին եւ
երեխայից:

ԵՐԵՎԱՆԵՐԸ
Կ. Բ. Գալիլի—6—7 ժ.
Գ. Ա. Թախանեան—7—8 ժ. ներքին եւ
երեխայից:

Բ. Ա. Նաւասարդեան—7 1/2—8 ժ.
Վարդ 50 կ. չքաւորները ձրիւ Համալսարանի
(կօնֆերմիս) եւ օպերացիայի համար առանձին:
Օ. Տ. Առվանիսկի—տանը. ծաղկահատ եւ բը-
ժըղական մարմամբար. դիմել 11—1 ժ.:
Հիւանդանոցի վերադասել:
Բժէկապետ ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ

ՄԻ ՀԻՆ ԴՊՐՈՑԱՒԱՐՏ ԵՐԻՏԱՍԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ Ե ՊԱՇՏՈՆ

կայրածքների վրա կառավարել, վերահսկող,
կոնտրօլի եւ այլն: Հասցէն հարցնել «Մշակի»
խմբագրատանը: 4—5

ՄԵՆԿԱՐԱՐՁՈՒՀԻ—ՄԱՍՆԱՐՍԿԱՆ
ՅԱՐԱԹԻՒՆՆԵԱՆ

ընդունում է հիւանդներ Շուշում, երկու ամ-
սով, յուլիսի 8-ից

Հասցէ՝ Մեղրեցոց եկեղեցու մօտ, Մէլիք-
Ղարաբեղեանցի տանը:
6—6 Ա. Յարութիւնեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Մի անձն, Մ. Յ., որ երկար ժամանակ ծա-
ռայել է զանազան ատեաններում եւ ներկա-
յումս գտնվում է Նիւթական նեղ վիճակի մէջ,
դիմում է բարեհարկների օգնութեան, յոյս ու-
նենալով, որ նրան կարողութիւն կը արվի ա-
պանովութիւն ունենալ մինչեւ նոր պաշտօն
գտնելու: 3—3

ՀԱՐԱԹԵՐԻՆ ՊԱՐՍԱՐՍԵԱՆԻ
ՊԱՐՍԻՑ ԾՈՅԻ

ԶԵՑՈՒՆՆԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԲՈՒՇԻՐՈՒՄ

(Հիմնված 25 տարուց ի վեր)

Հաղորդում է մանրամասն տեղեկութիւններ
Պարսից ծոցի առեւտրի մասին, ունի ներկա-
յացողիցներ հարաւային Պարսկաստանին անա-
ւոր կենտրոններում, ընդունում է յանձնարարու-
թիւններ, գնում եւ վաճառում է ապրանքներ,
փոխադրում է Եւրոպայից Պարսկաստան եւ
Պարսկաստանից Եւրոպա, դիրամտաւելի պա-
մաններով.—Հասցէն. Zeytoon C. G. Buchire
Persian-Gulf. 34—100

Ֆրանսիական Եղեմաւային Ընկերութիւն
«ՄԵՍՍԱԺԵՐԻ ՄԱՐԻՏԻՄ» — «MESSAGEBES MARITIMES»

29-ին յուլիսի (11-ին օգոստոսի ըստ ն. տ.) մեկնելու է Բագուից, առաւելան
11-ին, «Bagdad» շոգենաւը, հանդիպելով Նախաւային, Կ. Պոլիս, Դարդանէլ, Զմիւռնիս,
Մարսէյ, Հալիք եւ Լոնդօն:

Ուղղակի հաղորդակցութեան տոմսակերթ մինչեւ Պարիզ, Նոնպէս եւ մինչեւ Շա-
ղիս (Չիւստանում), Վաղիօստօկ գնացողների համար, կարելի է ստանալ Թիֆլիսում պա-
ցրած գներով:

Ապրանքների եւ ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւնների համար
Ընկերութեան Թիֆլիսի գործակալ պ. Վ. Յակոբեանին, ապիկին Արծրունու գալէրէյում, №
գրասենեակը. հեռախօս № 608: Գրասենեակը բաց է 9—1 ժամը գիշերվա եւ 5—7-ը
կրիան, բացի կիրակի օրերից:

БУХГАЛТЕРСКИЕ КЛАССЫ,

учр. И. Я. Бронъ-фонъ-Бреннеромъ.

Въ прошломъ году ОКОНИЛО курсъ 106: женскаго пола 43 и мужскаго по-
ла—63. При классахъ имѣется библіотека: товаро-технол. музей и бюро для по-
полненія практическихъ работъ.

Въ настоящемъ году для чтенія лекцій приглашены лучшіе специалисты, и-
менно: инж. М. И. Ченгеры, инж. Г. Я. Дюковъ, юристъ В. А. Москаловъ,
засл. пр. П. С. Левицкий, препод. ср. уч. зав. Э. К. Лозенъ, Ю. Ф. Гурмлинъ,
С. Е. Козловъ и др.

Обязат. предметы классовъ:

бухгалтерія, банковое дѣло, коммерческая ариѳметика, ариѳметика на счетахъ,
технологія, товаровѣдѣніе, корреспонденція, каллиграфія, торговлезнавіе, торго-
вые законы и для желающихъ: иностр. языки: стенографія, упражненія на пи-
шущей машинѣ.

По окончаніи выдаются АТТЕСТАТЫ и лучшимъ учащимся предоставляются
мѣста службы.

Плата за весь курсъ 60 руб. Курсъ продолжается 5 мѣс. при ежевечер-
нихъ, съ 5-ти до 8-ми ч. веч. занятіяхъ. Принимаются лица ОБОЕГО ПОЛА.

Программы и условія поступленія выдаются бесплатно въ канцеляріи клас-
совъ, Николаевская, 88, съ 9 до 1 ч. и съ 5 до 8 ч. веч.

Начало занятій съ 10 го сентября. Число вакансій ограничено. Двѣ без-

платныя вакансіи свободны.

Учредитель классовъ И. Бронъ-фонъ-Бреннеръ

Квартира: Михайловскій пр., № 71. 2—15

Տպագրվում է եւ մինչեւ յուլիսի վերջը յոյս կը տեսնէ
Լ է Օ

ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԶԱՐԵԱՆՑ

Մանրամասն կենսագրութիւն, լուսարանված գրական-պատմական տեսութիւններով.
Երկու հատոր, մօտ 650 էրես, բազմաթիւ (25-ից աւելի) պատկերներով (նազարեանց եւ նրա
մանակակիցները, «հիստորիայի» գլխաւոր աշխատակիցները, նազարեանցի ֆակսիմիլէն, գերեզմանը,
հիստորիա «խմբագրատանը»:
Մինչեւ տպագրութեան վերջնալը բացվում է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ:
Բաժանորդագրին է 1 ՐՈՒՐԼԻ, իսկ ճանապարհածախսով 1 ՐՈՒՐԼԻ 35 ԿՕՊԷԿ:
Եւ յոյս տեսնելուց յետոյ գինը կը բարձրացնվի:

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԸ ԼՈՅՍ ՏԵՍԱԻ ԵՒ ԲԱԺԱՆՎՈՒՄ Ե ԲԱԺԱՆՈՒՄ
ՆԵՐԻՆ

Վերադիր վճարով բաժանորդագրութիւն չէ ընդունվում:
Բաժանորդագրութիւնը Թիֆլիսում ընդունվում է «Մշակի» խմբագրատանը եւ ժո-
տենքերը գրավածառնոցներում ԲԱԺԱՆՈՒՄ առանց ճանապարհածախսի բաժանորդագրով
ընդունվում է Սամսոն Յարութիւնեանի գրավածառնոցում Միւս բաղադրից դիմում
Թիֆլիս. Редакция «Мшакъ».

ЗАКАВКАЗСКОЕ
МЕДНО-АППАРАТНОЕ
ЗАВЕДЕНИЕ
Тифлисъ, Садовая ул. д. 11
принимаетъ заказы на: КИСЕЛЫЯ
АППАРАТЫ, ПЕРЕГОННЫЕ КУБЫ И ВСЕ-
ВОЗМОЖНЫЯ медныя работы по умышлен. цѣнамъ.

ԱՌԵԻՏՐԵՎԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒՍԵՌԻԱՆԶԱՆՑՀԱՄԱՐ
ՏԱՄՆ ԵՒ ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առեւտրական Կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առեւտրական կրթութիւն
տալ երկու սեռի անձանց եւ պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշւապա-
ներ: Աւարտողները ստանում են ատեստատներ:

Աւանդելի առարկաները օրաք են՝ 1) Առեւտրական Տնտեսութիւն. 2) Առեւտրա-
կան Թուրաւորութիւն. 3) Հաշւապահութիւն (պարզ, կրկնակի եւ բանկային). 4) Թու-
րանութիւն համարչի վրա. 5) Առեւտրական Թղթակցութիւն. 6) Առեւտրակա-

մուրակի կանոնադրութիւն եւ 7) Գեղարվեստութիւն, վառ ձեւեր ուղղվելու
Ուսումը սկսվում է սեպտեմբերի 18-ից: Ընդունվողները սեպտեմբերի 2-ից
ամենաւն օր, առաւելան ժամը 10-ից մինչեւ 12-ը, եւ երկուշաբթի 4-ից մինչեւ 9-ը
ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սոյոսկուլում, Ալէքսանդր Փրիդմուլի տանը № 9:

Սերգիւիսկայա եւ Լեւոնտուիսկայա փողոցների անկիւնում Մրադիրը եւ կանոնները
կարելի է ստանալ ձրիապէս կուրսեր հիմնողի բնակարանում: Օտարաբաղադրեղ
մում են՝ Թիֆլիս, Ս. Ս. Մանուէլյանց.

(Է. Կ.) 9—25